

Հաշվետվություն

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կենցաղային պայմանների բարելավման, ընթացիկ վերանորոգման և անխափան շահագործման համար 2011 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկ.

1-ին մասնաշենքում վերանորոգվել է երեք խուց, փոխվել են ջեռուցման փականներն ու խողովակները:

2-րդ մասնաշենքում վերանորոգվել է երկու խուց, բարեկարգվել է շենքի տարածքը:

3-րդ մասնաշենքում վերանորոգվել է մեկ խուց, կառուցվել է ծաղկանոց:

4-րդ մասնաշենքում վերանորոգվել է երեք խուց:

5-րդ մասնաշենքում վերանորոգվել են երկրորդ և երրորդ հարկերի բաղնիքները, հիմնովին վերանորոգվել են խաղասենյակները, բարեկարգվել է զբոսահրապարակը:

Ամբողջ տարածքում անցկացվել է 25 մետր երկարությամբ կոյուղու նոր խողովակաշար: Վերանորոգվել է ջրավազանը: Հիմնովին կառուցվել է երկարատև տեսակցության երեք սենյակ, իսկ մյուս տեսակցության սենյակները վերանորոգվել են:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկ.

Կապիտալ վերանորոգվել է բնակելի գոտու բաղնիքը, լվացքատունը, ինչպես և՛ լվացքասենյակները և սանհանգույցները: Հանրակացարաններում իրականացվել է կոսմետիկ վերանորոգում: Վերանորոգվել է երկարատև տեսակցության մասնաշենքը և դրա տանիքը: Ընթանում են պահեստի վերանորոգման և բնակելի գոտու տարածքի բարեկարգման աշխատանքներ:

«Սևան» քրեակատարողական հիմնարկ.

Բնակելի գոտու ննջարաններում կառուցվել են զուգարաններ, կատարվում են ներքին հարդարման աշխատանքներ: Հիմնովին նորոգվել է 4-րդ հանրակացարանը. կառուցվել է նոր միջնապատ: Փոխվել է տանիքը: Ներկայումս կատարվում է վարչական մասնաշենքի աշխատասենյակների և միջանցքի վերանորոգման աշխատանքներ: Ընթանում է բաղնիքի վերանորոգման աշխատանքներ:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկ.

Վերանորոգվել է մեկ խուց, կարճատև տեսակցության սենյակը և գրադարանը: Մասնակի փոխվել է ռեժիմային մասնաշենքի տանիքի թիթեղը, վերանորոգվել է ընդունարանը, բարեկարգվել է արգելագոտու արահետը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կատարվող աշխատանքների մասին հաշվետվությունը կիրառարակվի դրանց ավարտից հետո:

